Luys Lույս®

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ

Հաշվետվություն Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից հրապարակված՝ Համաշխարհային գենդերային անհավասարության զեկույցի (2020թ.) հիման վրա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ 1
2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 3
3. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 6
4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԴՐՈՒՄՆԵՐ 10

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Գենդերային անհավասարությունը հասարակական հարաբերությունների բևեռացման դրսևորումներից է: Այն հակասում է սոցիալական արդարության սկզբունքին, քանի որ նվազեցնում է կանանց դերակատարումը կյանքի տարբեր ասպարեզներում: Ակնհայտ է նաև, որ գենդերային անհավասարությունը անհամատեղելի է ներառական տնտեսական զարգացման հետ: Գիտակցելով այս հանգամանքը՝ Համաշխարհային տնտեսական համաժողովի (ՀՏՀ) փորձագետները 2006-ին մասնագիտական շրջանառության մեջ են դրել նոր ցուցանիշ՝ *Համաշխարհային գենդերային անհավասարության (ՀԳԱ) ինդեքս*: Վերջինս «գենդերային ճեղքվածքը» գնահատում է հետևյալ չորս հատույթների կտրվածքով՝ *տնտեսություն*, *կրթություն*, *առողջապահություն* և *քաղաքականություն* (տե՛ս Գծապատկեր 1): Այս հայտանիշների ներառումը մեկ ընդհանրական ինդեքսում հնարավորություն է տալիս դասակարգել երկրները, ինչպես նաև հայտնաբերել տվյալ երկրում գենդերային անհավասարության պատճառները:

Գծապատկեր 1. ՀԳԱ ինդեքսի հենասյուները



ՀԳԱ ինդեքսը կարևորվում է նրանով, որ բացահայտում է կանանց ներուժի անարդյունավետ օգտագործումը տվյալ երկրի զարգացման գործընթացներում և ցույց է տալիս գենդերային անհավասարության և երկրի մրցունակության միջև անմիջական կապը, քանի որ գենդերային անհավասարության արդյունքում մարդկային կապիտալը կիրառվում է ոչ իր ամբողջ ներուժով, որն էլ սահմանափակում է երկրի

հնարավոր մրցունակությունը: ՀՏՀ-ի՝ ՀԳԱ ինդեքսին նվիրված ամենամյա հրապարակումները միտված են նպաստելու աշխատուժում կանանց մասնակցության բարձրացմանը, կանանց և տղամարդկանց աշխատավարձերի տարբերության վերացմանը, ինչպես նաև ղեկավար պաշտոններում կանանց ներգրավվածության ավելացմանը:

«ՀԳԱ - 2020» զեկույցը ներառում է 153 երկրներ: Դրանցից 107-ը, սկսած 2006-ից, մշտապես ընդգրկված է եղել ՀԳԱ ինդեքսի հաշվարկներում: ՀՏՀ-ի փորձագետները շարունակաբար ընդլայնել են զեկույցում ներառվող երկրների շրջանակը՝ նպատակ ունենալով ստանալ համաշխարհային գենդերային անհավասարության համակողմանի նկարագիրը:

Համաձայն զեկույցի արդյունքների՝ աշխարհը միջին հաշվով հաղթահարել է գենդերային անհավասարության շուրջ 68.6%-ը: Ըստ որում, ամենափոքր գենդերային անհավասարությունը դիտվում է «Կրթության ձեռքբերում» ենթաինդեքսում, իսկ ամենամեծը՝ «Քաղաքական մասնակցություն» ենթաինդեքսում: Ընթացիկ միտումները պրոյեկտելով դեպի ապագա՝ զեկույցը կանխատեսում է, որ համաշխարհային գենդերային «ճեղքվածքը» կվերանա շուրջ մեկ դար հետո: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա այստեղ 2019-ին ՀԳԱ ինդեքսը կազմել է 0.684, և 153 երկրների շարքում ՀՀ-ն զբաղեցրել է 98-րդ հորիզոնականը: Սա նշանակում է, որ ՀՀ-ն անցել է գենդերային հավասարություն տանող «ճանապարհի» շուրջ 68.4%-ը: Այս ցուցանիշը բավական համեստ է ոչ միայն առաջատար պետությունների, այլև Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների միջինի (71.3%) համեմատ:

«ՀԳԱ - 2020» զեկույցը բաղկացած է երկու մասից: Առաջին մասում ներկայացվում են գենդերային անհավասարության գնահատականները միջազգային համեմատությունների և համադրումների համատեքստում, ինչը թույլ է տալիս վեր հանել աշխարհի, ինչպես նաև առանձին տարածաշրջանների ձեռքբերումները և թերացումները: Բացի այդ, նկարագրվում է ՀԳԱ ինդեքսի մեթոդաբանությունը, և տրվում են անհրաժեշտ ելակետային ցուցանիշների սահմանումները և աղբյուրները: Երկրորդ մասում ամփոփվում են 153 երկրներից յուրաքանչյուրի ցուցաբերած արդյունքները 2019-ի ընթացքում:

2. ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԳԱ ինդեքսը հիմնված է երեք սկզբունքների վրա.

Առաջին, կարևորվում է ոչ թե հայտանիշի, օրինակ՝ կրթության կամ առողջապահության բացարձակ մակարդակը, այլ «գենդերային ճեղքվածքը» համապատասխան բնագավառում: Այլ կերպ ասած, ըստ մեթոդաբանության, կրթական ծառայությունների և մյուս հայտանիշների *բացարձակ* մեծությունները չեն ներառվում ինդեքսի հաշվարկման բանաձևում, քանի որ այդ բացարձակ թվերը ոչինչ չեն ասում կրթության և մյուս ոլորտներում առկա գենդերային անհավասարության մասին:

Երկրորդ, ինդեքսը արտահայտում է գենդերային անհավասարությունը ելքային պարամետրերում (կրթություն, առողջապահություն և այլն)՝ վերացարկվելով առանձին երկրներին բնորոշ յուրահատկություններից:

Երրորդ, ինդեքսը կենտրոնանում է ոչ թե կանանց նվաճումների, այլ կոնկրետ ցուցանիշների գծով առկա գենդերային անհավասարության վրա: Սա նշանակում է, որ այն երկիրը, որտեղ միջնակարգ դպրոցներում աղջիկների մասնաբաժինը գերազանցում է տղաների մասնաբաժնին, ստանում է նույն կշիռը, ինչ այն երկիրը, որտեղ տղաների և աղջիկների ներգրավվածությունը հավասար է:

Ինչպես արդեն նշվել է, ՀԳԱ ինդեքսը ստացվում է 4 ենթաինդեքսների միավորման արդյունքում (տե՛ս Գծապատկեր 1): Աղյուսակ 1-ը ներկայացնում է այդ ենթաինդեքսները, ինչպես նաև այն 14 ցուցանիշները, որոնք կիրառվում են այդ ենթաինդեքսների հաշվարկման համար: Հակիրճ նկարագրենք յուրաքանչյուր ենթաինդեքսի էությունը:

«Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ» ենթաինդեքսը հենվում է երեք հասկացությունների վրա՝ *մասնակցության անհավասարություն*, *վարձատրության անհավասարություն* և *առաջխաղացման անհավասարություն*: Մասնակցության անհավասարությունը գնահատվում է իգական և արական սեռերի ներկայացուցիչների աշխատուժի մասնակցության մակարդակների հարաբերակցությամբ: Վարձատրության անհավասարության հիմքում իգական և արական սեռերի ներկայացուցիչների վաստակած եկամուտների հարաբերակցությունն է, ինչպես նաև հանրային կարծիքի ամենամյա հարցման միջոցով կառուցվող մի որակական ցուցանիշ, որը ներկայացնում է միատեսակ աշխատանքների վարձատրությունների հավասարությունը: Վերջապես,

առաջխաղացման անհավասարությունը չափվում է իգական և արական սեռերի օրենսդիրների, բարձրաստիճան պաշտոնյաների և կառավարիչների թվաքանակի հարաբերակցությամբ, ինչպես նաև իգական և արական սեռերի մասնագետների և տեխնիկական աշխատողների թվաքանակի հարաբերակցությամբ:

«Կրթության ձեռքբերում» ենթաինդեքսը գնահատում է կրթության հասանելիության ասպարեզում առկա «գենդերային ճեղքվածքը»: Այդ նպատակով օգտագործվում է տարրական, միջնակարգ և բարձրագույն կրթական համակարգերում սովորող իգական և արական սեռերի ներկայացուցիչների թվաքանակի հարաբերակցությունը: Բացի այդ, կիրառվում է նաև իգական և արական սեռերի ներկայացուցիչների գրագիտության մակարդակների հարաբերակցությունը, որը ներկայացնում է կրթության ոլորտի գենդերային անհավասարության երկարաժամկետ պատկերը:

«Առողջություն և գոյատևում» ենթաինդեքսը գնահատում է կանանց և տղամարդկանց առողջության տարբերությունները երկու ցուցանիշների միջոցով: Առաջինը իգական և արական սեռերի նորածինների թվաքանակի հարաբերակցությունն է, որը միտված է չափելու մարդկանց նախասիրությունները զավակի սեռի հարցում: Երկրորդը իգական և արական սեռերի ներկայացուցիչների առողջ կյանքի տևողությունների հարաբերակցությունն է, որը ցույց է տալիս, թե այլ հավասար պայմաններում տղամարդիկ և կանայք քանի տարվա առողջ կյանք կարող են ակնկալել:

«Քաղաքական մասնակցություն» ենթաինդեքսը գնահատում է «գենդերային ճեղքվածքը» քաղաքական որոշումների կայացման գործընթացներում՝ հաշվի առնելով կանանց մասնաբաժինը խորհրդարանում և կառավարությունում: Բացի այդ, այս ենթաինդեքսում ներառվում է պետության իգական և արական սեռերի ղեկավարների իշխանության տարիների հարաբերակցությունը (վերջին 50 տարիների կտրվածքով): Նկատենք, որ տվյալների բացակայության պատճառով ենթաինդեքսը չի դիտարկում կանանց ներգրավվածությունը տեղական ինքնակառավարման մարմիններում:

Աղյուսակ 1. ՀԳԱ ինդեքսի կառուցվածքը

Ենթաինդեքս	Ցուցանիշ	Աղբյուր
Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ	Իգական և արական սեռերի ներկայացուցիչների աշխատուժի մասնակցության մակարդակների հարաբերակցություն	Աշխատանքի միջազգային կազմակերպություն, ILOSTAT տվյալների բազա, մոդելային գնահատականներ
	Միատեսակ աշխատանքների համար իգական և արական սեռերի ներկայացուցիչների վարձատրությունների հավասարություն (0-1 սանդղակ)	Համաշխարհային տնտեսական համաժողով, հանրային կարծիքի հարցում, 2018-2019թթ. կամ առկա ամենաթարմ տվյալները
	Իգական և արական սեռերի ներկայացուցիչների վաստակած եկամուտների հարաբերակցություն	Աշխատանքի միջազգային կազմակերպություն, ILOSTAT տվյալների բազա
	Իգական և արական սեռերի օրենսդիրների, բարձրաստիճան պաշտոնյաների և կառավարիչների թվաքանակի հարաբերակցություն	Աշխատանքի միջազգային կազմակերպություն, ILOSTAT տվյալների բազա
	Իգական և արական սեռերի մասնագետների և տեխնիկական աշխատողների թվաքանակի հարաբերակցություն	Աշխատանքի միջազգային կազմակերպություն, ILOSTAT տվյալների բազա
Կրթության ձեռքբերում	Իգական և արական սեռերի ներկայացուցիչների գրագիտության մակարդակների հարաբերակցություն	Միացյալ ազգերի կրթական, գիտական և մշակութային կազմակերպություն (UNESCO), 2017թ. կամ առկա ամենաթարմ տվյալները
	Տարրական կրթական համակարգում սովորող իգական և արական սեռերի ներկայացուցիչների թվաքանակի հարաբերակցություն	Միացյալ ազգերի կրթական, գիտական և մշակութային կազմակերպություն (UNESCO), 2017թ. կամ առկա ամենաթարմ տվյալները
	Միջնակարգ կրթական համակարգում սովորող իգական և արական սեռերի ներկայացուցիչների թվաքանակի հարաբերակցություն	Միացյալ ազգերի կրթական, գիտական և մշակութային կազմակերպություն (UNESCO), 2017թ. կամ առկա ամենաթարմ տվյալները
	Բարձրագույն կրթական համակարգում սովորող իգական և արական սեռերի ներկայացուցիչների թվաքանակի հարաբերակցություն	Միացյալ ազգերի կրթական, գիտական և մշակութային կազմակերպություն (UNESCO), 2017թ. կամ առկա ամենաթարմ տվյալները
Առողջություն և գոյատևում	Իգական և արական սեռերի նորածինների թվաքանակի հարաբերակցություն	Միացյալ ազգերի կազմակերպություն, *Աշխարհի բնակչության հեռանկարները-2019*, գնահատականներ 2015-2020թթ. համար
	Իգական և արական սեռերի ներկայացուցիչների առողջ կյանքի տևողությունների հարաբերակցություն	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, 2016թթ. կամ առկա ամենաթարմ տվյալները
Քաղաքական մասնակցություն	Իգական և արական սեռերի պատգամավորների թվաքանակի հարաբերակցություն	Միջխորհրդարանական միություն, 1 սեպտեմբերի 2019թ.
	Իգական և արական սեռերի նախարարների թվաքանակի հարաբերակցություն	Միջխորհրդարանական միություն, 1 սեպտեմբերի 2019թ.
	Պետության իգական և արական սեռերի ղեկավարների իշխանության տարիների հարաբերակցություն (վերջին 50 տարիների կտրվածքով)	Համաշխարհային տնտեսական համաժողովի հաշվարկներ, 11.07.1970-01.07.2019 համար

Նկարագրված ՀԳԱ ինդեքսի կառուցվածքում 14 ցուցանիշները միավորվում են հետևյալ կերպ. նախ հաշվարկվում են ենթաինդեքսները՝ որպես բաղադրիչ ցուցանիշների կշռված միջին թվաբանական: Ըստ որում, որպես կշիռներ օգտագործվում են համապատասխան ցուցանիշների ստանդարտ շեղումների[1]

[1] Ցուցանիշի ստանդարտ շեղումը (standard deviation) չափում է նրա միջին շեղվածությունը միջին թվաբանականից:

հակադարձ մեծությունները: Հիմնական իմաստն այն է, որը մեծ ցրվածքով ցուցանիշը ստանա փոքր կշիռ, և այդպիսով չեզոքացվի «մասշտաբի գործոնը»: Այնուհետև հաշվարկվում է ՀԳԱ ինդեքսը 4 ենթաինդեքսների պարզ միջին թվաբանականի բանաձևով: Ե՛վ ՀԳԱ ինդեքսը, և՛ ենթաինդեքսները տատանվում են 0-1 միջակայքում, որտեղ 0-ն ներկայացնում է լիակատար գենդերային անհավասարությունը, իսկ 1-ը՝ լիակատար գենդերային հավասարությունը[2]:

3. ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2019-ին ՀԳԱ ինդեքսը ՀՀ-ում կազմել է 0.684, և 153 երկրների շարքում Հայաստանը զբաղեցրել է 98-րդ հորիզոնականը: Նախորդ տարվա համեմատ ինդեքսը բարելավվել է 0.6 տոկոսային կետով[3], սակայն հորիզոնականը մնացել է անփոփոխ:

Գծապատկեր 2. ՀԳԱ ինդեքսի դինամիկան ՀՀ-ում (2007-2019թթ.)



Գծապատկեր 2-ից երևում է, որ ՀՀ-ում ՀԳԱ ինդեքսի զարգացումը անցել է երեք շրջափուլերով: Առաջին փուլը ընդգրկում է ինդեքսի հաշվարկման առաջին տարիները՝ 2007-2010թթ., երբ այն տատանվել է 0.662-0.668 միջակայքում: Ըստ որում, 2007-2009թթ. ՀՀ վարկանիշային դիրքը արձանագրել է նահանջ, իսկ 2010-ի առաջընթացը չի վերականգնել ՀՀ սկզբնական դիրքը՝ 71-րդ հորիզոնականը:

[2] Global Gender Gap Report 2020, World Economic Forum, 16.12.2019, https://www.weforum.org/reports/global-gender-gap-report-2020 (այցելվել է 23.01.2020թ.):

[3] Քանի որ ինդեքսը և ենթաինդեքսները կարող են տատանվել 0-1 միջակայքում, ապա դրանց փոփոխությունը կարելի է (և օգտակար է) մեկնաբանել որպես տոկոսային կետ:

Երկրորդ փուլը ներառում է 2010-2014թթ., երբ «գենդերային ճեղքվածքը» ՀՀ-ում խորացել է թեև աննշան, բայց կայուն տեմպերով՝ 0.667-ից հասնելով 0.662-ի: Միաժամանակ, այս բացասական միտումը ուղեկցվել է վարկանիշային աղյուսակում ՀՀ զբաղեցրած դիրքի վատթարացմամբ. եթե 2010-ին ՀՀ-ն զբաղեցրել է 84-րդ հորիզոնականը, ապա 2014-ին այն արդեն 103-րդ տեղում էր: Վերջապես երրորդ փուլը ներառում է **2014-2019թթ., երբ Հայաստանը, կարծես թե, գտել է «գենդերային ճեղքվածքը» հաղթահարելու ուղին: Այս ժամանակաշրջանում ինդեքսը մշտապես բարելավվել է՝ 2019-ին հասնելով մի մակարդակի, որը 2014-ի մեծությունը գերազանցում է 2.2 տոկոսային կետով: Միաժամանակ, այս դրական դինամիկայի արդյունքում որոշակիորեն բարելավվել է նաև ՀՀ վարկանիշային դիրքը, որը 2019-ին 2014-ի համեմատ բարձր է 5 հորիզոնականով: Սակայն պետք է նշել նաև, որ 2018-ին 2017-ի համեմատ ՀՀ վարկանիշային դիրքը վատթարացել է 1 հորիզոնականով և պահպանվել այս մակարդակի վրա 2019-ին:**

Աղյուսակ 2-ը հուշում է, որ 2019-ին ՀԳԱ ինդեքսի վերը նկարագրված աճը (նախորդ տարվա համեմատ) պայմանավորված է «Առողջություն և գոյատևում» և «Քաղաքական մասնակցություն» ենթաինդեքսների գծով արձանագրված առաջընթացով: Սակայն մյուս երկու ենթաինդեքսների՝ «Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ» և «Կրթության ձեռքբերում» ցուցիչների նահանջը որոշակիորեն զսպել է վարկանիշային աղյուսակում Հայաստանի զբաղեցրած դիրքի բարելավումը: Արդյունքում 2019-ին ՀՀ-ն կրկին զբաղեցրել է 2018-ի հորիզոնականը:

Աղյուսակ 2. ՀԳԱ ինդեքսը և դրա բաղադրիչները ՀՀ-ում (2013-2019թթ.)

Ցուցանիշ/Տարի		2013	2014	2015	2016	2017	2018	2019
Համաշխարհային գենդերային անհավասարություն	Ինդեքս	0.663	0.662	0.668	0.669	0.677	0.678	0.684
	Հորիզոնական	94	103	105	102	97	98	98
Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ	Ինդեքս	0.638	0.648	0.664	0.671	0.671	0.675	0.673
	Հորիզոնական	82	82	79	69	71	73	78
Կրթության ձեռքբերում	Ինդեքս	1.000	1.000	1.000	1.000	0.999	1.000	0.998
	Հորիզոնական	29	31	35	27	42	35	45
Առողջություն և գոյատևում	Ինդեքս	0.95	0.933	0.939	0.939	0.939	0.939	0.948
	Հորիզոնական	131	142	144	143	143	148	148
Քաղաքական մասնակցություն	Ինդեքս	0.066	0.068	0.068	0.068	0.099	0.099	0.118
	Հորիզոնական	115	123	125	125	111	115	114

ՀԳԱ ենթաինդեքսների դինամիկան 2018-2019թթ. ներկայացնենք առավել մանրամասն (տե՛ս Աղյուսակ 3): Ինչպես արդեն նշվել է, ***ՀՀ տնտեսական* կյանքում**

2019-ին 2018-ի համեմատ նկատվել է «գենդերային ճեղքվածքի» խորացում: Այս հանգամանքը հիմնականում պայմանավորված է երկու գործոններով: Առաջին՝ չնայած նշված ժամանակաշրջանում նվազել են թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց աշխատուժի մասնակցության մակարդակները, իգական սեռի «կորուստը» եղել է համեմատաբար ավելի շոշափելի: Երկրորդ՝ ճիշտ նույն տրամաբանությամբ նվազել է կանանց և տղամարդկանց վաստակած եկամուտների հարաբերակցությունը (հօգուտ տղամարդկանց): Հարկ է նկատել նաև, որ տնտեսության հատույթում իրավիճակը բարենպաստ է մասնագիտական և տեխնիկական աշխատանքներում կանանց և տղամարդկանց զբաղվածության հարաբերակցության առումով: Ավելին, այս բնագավառում կանանց մասնաբաժինը գերազանցում է տղամարդկանց մասնաբաժնին: Հատկանշական է, սակայն, որ ըստ ՀԳԱ ինդեքսի մեթոդաբանության՝ այս երևույթը չի համարվում գենդերային անհավասարություն:

2018-2019թթ. *կրթության* ոլորտում արձանագրվել է գենդերային անհավասարության աննշան աճ, սակայն ենթաինդեքսը շարունակում է մնալ չափազանց բարձր: Այս հատույթում Հայաստանի ձեռքբերումները նկատելի են, բայց ոչ բացառիկ: Բավական է նշել, որ 2019-ին կրթության ենթաինդեքսի համաշխարհային միջինը կազմել է 0.954, ինչը նույնպես բավականաչափ բարձր ցուցանիշ է: Խնդիրն այն է, որ «Կրթության ձեռքբերում» ենթաինդեքսի հաշվարկում օգտագործվող ցուցիչները հաշվի չեն առնում այն թաքնված խնդիրները, որոնք առկա են զարգացող երկրների կրթական համակարգերում: Ժամանակն է, որ ՀՏՀ-ի փորձագետները նախաձեռնեն աշխատանքներ կրթության ոլորտի վիճակը առավել ճշգրիտ ախտորոշող ցուցանիշի մշակման ուղղությամբ:

ՀՀ-ում գենդերային անհավասարության թերևս ամենախոցելի հենասյունը *առողջապահությունն* է: Ինչպես 2018-ին, այնպես էլ 2019-ին «Առողջություն և գոյատևում» ենթաինդեքսի գծով ՀՀ-ն 153 երկրների շարքում զբաղեցրել է 148-րդ հորիզոնականը՝ չնայած այդ ընթացքում ՀԳԱ ինդեքսի որոշակի աճին: Խնդրահարույց է հատկապես նորածինների հարաբերակցությունն ըստ սեռի, որը տարբերվում է կենսաբանորեն ընդունելի մեծությունից (94.4%): Սա կարող է վկայել հասարակության որոշ շերտերում նորածնի սեռով պայմանավորված խտրական վերաբերմունքի առկայության մասին: Հատկանշական է նաև, որ Հայաստանում կանայք առողջ կյանքով ապրում են ավելի երկար, քան տղամարդիկ: Այս փաստը «Առողջ կյանքի տևողություն» ցուցանիշի համար ապահովում է հնարավոր առավելագույն մեծություն, ինչը, իր հերթին, Հայաստանի համար երաշխավորում է այդ հայտանիշի 1-ին հորիզոնականը: Աղյուսակ 3-ը, սակայն, ցույց է տալիս, որ

վերջինս չունի էական դերակատարում «Առողջություն և գոյատևում» ենթաինդեքսի ձևավորման հարցում. պատահական չէ, որ բավականաչափ բարձր է նաև «Առողջ կյանքի տևողություն» ցուցանիշի համաշխարհային միջինը:

Բացի «Առողջություն և գոյատևում» ենթաինդեքսից՝ 2018-2019թթ. որոշակի առաջընթաց է արձանագրվել նաև *«Քաղաքական մասնակցություն»* ենթաինդեքսի դինամիկայում: Վերջինս պայմանավորված է խորհրդարանում կանանց մասնաբաժնի ավելացմամբ, ինչի շնորհիվ «Կանայք խորհրդարանում» ցուցանիշի սանդղակում Հայաստանի դիրքը բարելավվել է 32 հորիզոնականով, իսկ այս ընթացքում կանանց մասնաբաժինը կառավարությունում ընդհակառակը՝ նվազել է:

Աղյուսակ 3. ՀԳԱ ենթաինդեքսները և դրանց հաշվարկում օգտագործվող ցուցանիշները ՀՀ-ում (2018թ. և 2019թ.)[4]

		Կին	Տղամարդ	Հորիզոնական	Ցուցանիշ	Միջին (Աշխարհ)
Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ	**2018**	**-**	**-**	**73**	**0.675**	**0.586**
	2019	**-**	**-**	**78**	**0.673**	**0.582**
Աշխատուժի մասնակցության մակարդակ, %	2018	57.7	75.7	84	0.762	0.669
	2019	55.8	75.2	96	0.742	0.661
Միատեսակ աշխատանքների վարձատրությունների հավասարություն, 0-1	2018	-	-	38	0.709	0.645
	2019	-	-	25	0.731	0.613
Վաստակած եկամուտ, ԱՄՆ դոլար	2018	6926.0	12714.0	99	0.545	0.510
	2019	6100.0	11700.0	112	0.522	0.499
Օրենսդիր համակարգում, բարձրաստիճան և ղեկավար պաշտոններում զբաղվածություն, %	2018	29.5	70.5	86	0.419	0.329
	2019	29.5	70.5	88	0.419	0.356
Մասնագիտական և տեխնիկական աշխատանքներում զբաղվածություն, %	2018	61.6	38.4	1	1.000	0.753
	2019	64.2	35.8	1	1.000	0.756
Կրթության ձեռքբերում	**2018**	**-**	**-**	**35**	**1.000**	**0.949**
	2019	**-**	**-**	**45**	**0.998**	**0.954**
Գրագիտության մակարդակ, %	2018	99.7	99.8	49	0.999	0.882
	2019	99.7	99.8	56	0.999	0.899
Տարրական կրթական համակարգում ներգրավվածություն, %	2018	92.0	92.1	69	0.999	0.978
	2019	90.6	90.9	94	0.996	0.757
Միջնակարգ կրթական համակարգում ներգրավվածություն, %	2018	88.1	87.5	1	1.000	0.967
	2019	88.1	87.5	1	1.000	0.954
Բարձրագույն կրթական համակարգում ներգրավվածություն, %	2018	58.7	46.1	1	1.000	0.939
	2019	62.7	47.1	1	1.000	0.931
Առողջություն և գոյատևում	**2018**	**-**	**-**	**148**	**0.939**	**0.955**
	2019	**-**	**-**	**148**	**0.948**	**0.958**
Նորածինների հարաբերակցություն ըստ սեռի, %	2018	-	-	148	0.886	0.921
	2019	-	-	150	0.898	0.925
Առողջ կյանքի տևողություն, տարի	2018	68.7	63.6	1	1.060	1.034
	2019	68.7	63.6	1	1.060	1.034
Քաղաքական մասնակցություն	**2018**	**-**	**-**	**115**	**0.099**	**0.223**
	2019	**-**	**-**	**114**	**0.118**	**0.239**
Կանայք խորհրդարանում, %	2018	18.1	81.9	96	0.221	0.284
	2019	24.2	75.8	64	0.320	0.298
Կանայք կառավարությունում, %	2018	11.1	88.9	109	0.125	0.208
	2019	7.1	92.9	127	0.076	0.255
Պետության կին/տղամարդ ղեկավարների իշխանության տարիներ (վերջին 50 տարիների կտրվածքով)	2018	0.0	50.0	71	0.000	0.189
	2019	0.0	50.0	73	0.000	0.190

4. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԴՐՈՒՄՆԵՐ

Ինչպես 2018-ին, այնպես էլ այս տարի ՀԳԱ ինդեքսի միջազգային վարկանիշային աղյուսակը գլխավորում է Իսլանդիան: Վերջինիս հաջողվել է վերացնել «գենդերային ճեղքվածքի» շուրջ 88%-ը: Ավելին, այն ամբողջությամբ հաղթահարել է գենդերային անհավասարությունը «Կրթության ձեռքբերում» և «Առողջապահություն և գոյատևում» հատույթներում, հանդիսանում է համաշխարհային առաջատար «Քաղաքական մասնակցություն» ենթաինդեքսի գծով,

[4] Հարկ է նկատել, որ ըստ սահմանման՝ ցուցանիշը (այս աղյուսակի նախավերջին սյունակը) կարող է տատանվել 0-1 միջակայքում: Բացառություն են կազմում նորածինների հարաբերակցությունը՝ 0-0.944, և առողջ կյանքի տևողությունը՝ 0-1.060:

իսկ «Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ» ենթաինդեքսի դեպքում զիջում է միայն Բենինին: **Ինչ վերաբերում է վարկանիշային աղյուսակի վերջին հորիզոնականին, ապա այնտեղ Եմենն է՝ միակ երկիրը, որը դեռևս չի հաղթահարել գենդերային հավասարության «ճանապարհի» նույնիսկ մեկ երկրորդը:** Համեմատաբար բարվոք է Եմենի կատարողականը «Առողջություն և գոյատևում» ենթաինդեքսի գծով, քանի որ թվով 24 երկրներ գտնվում են նրանից ներքև: «Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ» և «Քաղաքական մասնակցություն» ենթաինդեքսների կտրվածքով Եմենը եզրափակում է հետնապահ երկրների եռյակը, իսկ «Կրթության ձեռքբերում» ենթաինդեքսի գծով ցուցաբերում է չորրորդ վատագույն կատարողականը:

Աղյուսակ 4. ՀԳԱ ինդեքսը Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում (2019թ.)

Երկիր	Հորիզոնական		Ինդեքս
	տարածաշրջանային	համաշխարհային	
Լատվիա	1	11	0.785
Ալբանիա	2	20	0.769
Մոլդովա	3	23	0.757
Էստոնիա	4	26	0.751
Բելառուս	5	29	0.746
Լիտվա	6	33	0.745
Սլովենիա	7	36	0.743
Սերբիա	8	39	0.736
Լեհաստան	9	40	0.736
Բուլղարիա	10	49	0.727
Ռումինիա	11	55	0.724
Ուկրաինա	12	59	0.721
Խորվաթիա	13	60	0.720
Սլովակիա	14	63	0.718
Բոսնիա և Հերցեգովինա	15	69	0.712
Հյուսիսային Մակեդոնիա	16	70	0.711
Մոնտենեգրո	17	71	0.710
Ղազախստան	18	72	0.710
Վրաստան	19	74	0.708
Չեխիա	20	78	0.706
Ռուսաստան	21	81	0.706
Ղրղզստան	22	93	0.689
Ադրբեջան	23	94	0.687
Հայաստան	**24**	**98**	**0.684**
Հունգարիա	25	105	0.677
Տաջիկստան	26	137	0.626

Աղյուսակ 4-ում Հայաստանը համեմատվում է Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի մյուս երկրների հետ: Ինչպես տեսնում ենք, երկրների այս խմբում ՀՀ-ն գերազանցում է միայն Հունգարիային (0.677 միավոր, 105-րդ հորիզոնական) և Տաջիկստանին (0.626 միավոր, 137-րդ հորիզոնական): Առաջատարը Լատվիան է, որը բավական բարձր դիրք է զբաղեցնում նաև համաշխարհային վարկանիշային սանդղակում՝ 11-րդ հորիզոնական և 0.785 միավոր: **Նկատենք նաև, որ ՀԳԱ ինդեքսի գծով Հայաստանից առաջ են նաև Բելառուսը (0.746 միավոր, 29-րդ հորիզոնական), Ղազախստանը (0.710 միավոր, 72-րդ հորիզոնական), Ռուսաստանը (0.706 միավոր, 81-րդ հորիզոնական) և Ղրղզստանը (0.689 միավոր, 93-րդ հորիզոնական), այսինքն՝ Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) մյուս բոլոր պետությունները:**

Աղյուսակ 5-ը ցույց է տալիս, որ ըստ ՀԳԱ ինդեքսի՝ Հայաստանը տարածաշրջանում գտնվում է միջին դիրքերում՝ զբաղեցնելով երրորդ տեղը (0.684 միավոր, 98-րդ հորիզոնական): Այն զիջում է Վրաստանին (0.708 միավոր, 74-րդ հորիզոնական), որը տարածաշրջանի առաջատարն է, և Ադրբեջանին (0.687 միավոր, 94-րդ հորիզոնական): Տարածաշրջանում չորրորդը Թուրքիան է (0.635 միավոր, 130-րդ հորիզոնական), իսկ հինգերորդը՝ Իրանը (0.584 միավոր, 148-րդ հորիզոնական): Նկատենք, որ Հայաստանը գերազանցում է հետնապահներին՝ Թուրքիային և Իրանին, շոշափելի առավելությամբ, մինչդեռ երրորդ և երկրորդ հորիզոնականների տարբերությունը էական չէ:

Աղյուսակ 5. ՀԳԱ ինդեքսը և ենթաինդեքսները Հայաստանում և հարևան երկրներում (2019թ.)

Ցուցանիշ/Երկիր		Հայաստան	Իրան	Թուրքիա	Վրաստան	Ադրբեջան
Համաշխարհային գենդերային անհավասարություն	Ինդեքս	0.684	0.584	0.635	0.708	0.687
	Հորիզոնական	98	148	130	74	94
Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ	Ինդեքս	0.673	0.381	0.478	0.701	0.748
	Հորիզոնական	78	147	136	61	33
Կրթության ձեռքբերում	Ինդեքս	0.998	0.953	0.961	1.000	0.996
	Հորիզոնական	45	118	113	29	60
Առողջություն և գոյատևում	Ինդեքս	0.948	0.966	0.976	0.976	0.941
	Հորիզոնական	148	130	64	68	152
Քաղաքական մասնակցություն	Ինդեքս	0.118	0.037	0.124	0.154	0.063
	Հորիզոնական	114	145	109	94	140

Աղյուսակ 5-ը նաև ցույց է տալիս, որ Հայաստանը տարածաշրջանում ունի համեմատական առավելություն կրթության ոլորտի գենդերային հավասարության առումով[5]:

Ինչպես կարելի էր եզրակացնել Աղյուսակ 3-ում բերված թվային տվյալների վերլուծությունից, Հայաստանի համար խնդրահարույց է «Առողջություն և գոյատևում» ենթաինդեքսը: Վերջինիս գծով Հայաստանը տարածաշրջանում զբաղեցնում է չորրորդ տեղը՝ առաջ անցնելով միայն Ադրբեջանից: Ըստ որում, ինչպես արդեն նշվել է, Հայաստանը թերանում է նորածինների հարաբերակցության հայտանիշով: Ավելին, ՀՀ-ն պատկանում է այն 6 վատագույն երկրների խմբին (Հայաստան, Ադրբեջան, Չինաստան, Հնդկաստան, Պակիստան, Վիետնամ), որոնցում այս գործակիցը փոքր է 92%-ից:

[5] Նկատենք, որ համանման եզրահանգում էր ստացվել նաև 2019-ին «Լույս» հիմնադրամի կողմից հրապարակված մեկ այլ ուսումնասիրությունում, որը նվիրված էր ՀՀ մարդկային ներուժի զարգացման ինդեքսներին. տե՛ս *ՀՀ մարդկային ներուժի զարգացման ինդեքսները և ցուցանիշները - 2019, Միջազգային կառույցների կողմից հրապարակված ցուցանիշների ուսումնասիրություն,* https://www.luys.am/index.php?m=yearRep&lang=arm&p=186 (այցելվել է 23.01.2020թ.):

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*